

քին շուշի ներքոյ այնպիսի մեծ բարոյական անանկութիւն է ծածկուում այդաեղ, որ առողջ դատողութեան, վեհ հոգու տէր անձի աշքում աւելի ողորմելի են ներկայանում նորքա, քան հրապարակի վերայ եղած խեղճերը՝ քաղաքակրթութիւնը նորանոր յաղթանակներ է կանգնում այն, ճոխացնում ու գեղեցկացնում է կեանքը, բայց այդ կեանքը քչերն են վայելում և նոցա վայելածին անմիաները միայն նախանձել կարող են. մեծամասնութիւնը տագնապի մէջ է և աւելի դառնութիւններ է կրում զուցէ քան առաջ: Սակայն և այն գէպքում, երբ մեծ աշխարհը իւր լուսաւորութեան և զօրութեան շնորհիւ ճոխութիւն և փառք ձեռք բերէր՝ փոքր մարդոց փոքր ժողովուրդների համար խսկական փառքի աղբիւր իւր ներքին բարոյական է մնում՝ մի զօրութիւն, որ իւր նշանակութիւնը պահում է նաև ամենափոքր բաների մէջ և ոչ մի արտաքին ոյժի առաջ ցի խորտակուում, տեղի չէ տալիս: Աւազ, ինչքն աւելի տարրեր աւելի բարւոք վիճակ կունենար հայ ժողովուրդն այսօր, եթէ իւր բարոյական ոյժերը գնահատած լինէր, նոցա զարգացման համար աշխատէր. արթնանար այն ժամանակ միայն, երբ տուաքելական ձայնը՝ աւետարանի ձայնը նորան կրկանչը, ընթանար այն ճանապարհով որ Քրիստոս է լուսաւորում: Այո՛, իւր կապանքների և նեղութեան մէջ ևս երանելի կլինէր նա այն ժամանակ ու աղդերի նախանձը կշարժէր. և եթէ մինչև այժմ իսկ մի որոշ չափով նախանձ շարժել է՝ մի՛թէ իւր ներքին արժանեաց, իւր բարոյական զօրութեան համար չէ եղել: Սակայն պատմութեան արդար դատաւորն անշուշտ պիտ ներէ անցած սերունդին նորս սիսաներն, եթէ դորժել է, այն անհուն տառապանքների փխարէն, որ անմեղ տեղը կրեց. ներկայ սերունդն է, որ անցեալի պատիմը կտանայ, եթէ իրատ չառնէ ընդունած սարսափելի դասից:

Եւ ամեն անգամ, երբ մի նոր սերունդ հանդէս է գալիս կրթութեան ասպարէզի վերայ հսկից դասեր առնելու՝ ամենանուիրական պարտք է կրթողի համար քննել և կըսադասել թէ արդեօք ի՞նչ բնաւորութիւն պէտք

է ունենան իւր աւանդած դասերը. արդեօք այն ձայնը, որով նա մանկական անմեղութեամբ ննջող, կամ մեռեալ անկրթութեան մէջ թըմբած հոգիները պէտք է արթնացնէ և կենացնացնէ՝ կեանքի խսկական կայարանից է իջնում. արդեօք այն լցուր, որով նա խաւարմաքերը պէտք է լուսաւորէ և ուղիղ ճանապարհ ցոյց տայ՝ ծշմարտութեան Արեգակի, Քրիստոսի լցոյն է. «Զի մի յայսմհետէ իցեմք տզայք խառվեալք և տատանեալք յամենայն հոգմոց վարդապետութեան, խարէութեամբ մարդկան՝ խորամանկութեամբ ի խարէութիւն մոլորութեան, այլ ծշմարտեալք սիրով՝ ածեցուացուք ի նա զամենայն, որ է զլուխ Քըրիստոս»:

Կ. Վ.



ՀԱՅՈՑ ԵԿԵՊԵՑԻՑ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԻ ԱՊՈԽ-
ՆԻՑ ՀԵՏ

ԸՆՏ

ՎՐԹԱՆԵԼ ՔԵՐԹՈՂԻ

Գ. Ի Ո Ւ Թ Ե Ը Ն Ա

Մեր եկեղեցոց պատմութեան համար ամենից ամելի պարզաբնութեան կարօտ եւ հետաքրքիր խնդիրներից մէկն է նորա ունեցած յարաքերութիւնը երկու հարեւան ազգերի՝ Վրաց եւ Աղոանից հետ: Վրաց անցեալու հարկան ամելի ծանօթ է, ամելի է ուսումնակրութեան առարկայ եղել. եթէ նոցա եկեղեցոց ծագման եւ մերի հետ առընչութեան մասին պակասում են սույզ մանրամասն տեղեկութիւններ՝ մեր ծեռքում կայ գոնէ մի կարեւոր պատմական յիշառակարան, Ռևտանէսի պատմութեան միջոցով լոյս տեսած զրագրութիւնը, որ թոյլ է տալիս երկու եկեղեցիների քածանման զործը պարզել: Տարբեր է խնդիրը Աղոանից նկատմամբ: Սոցա մասին մենք զբեթէ ամելի քան շզիտենք, քան ինչ որ Մ. Կաղանկատուացին է պատմում. իսկ նա ընծայել է մեզ միայն մի կցկոտոր քաղուածք իւր ծեռքն հասած յի-

շատակարաններից, որոնց սակաւ մասը զոտ պատմական նշանակութիւն ունի, եւ այն Եղարից յետոյ եկող պատմութեան համար։ Այդ յիշատակարանների ամենաներից մէկն է Հայոց Յովհաննէս Բ. կաթոլիկոսի Աղուանից Աբաս կաթոլիկոսին գրած թուղթը, * որի մէջ վերջինն «սիրելի եղայրը եւ աժոռութից» է անուանուած եւ ընդունելով թէ «հարցն ձեր հաստակից էին հարցն մերոց եւ դուք մեզ», հրափրուամ է հեռացնել իրենց միջից մի ինչ որ նորասուս նշանակած մոլորութիւն եւ մի քանի եպիսկոպոսներ ուղարկել Հայաստան՝ լսել զցշմարի՛ Վարդապետութիւնն։ Թղթի քովանդակութիւնից երեսում է, որ հայելոն այդ ժամանակ խոստովանելով՝ Աստուած մարմացեալ ոչ մասամբ, այլ քոլորուիմբ, ոչ երկուութիւն, այլ միութիւն անքաժանելի», երգում են արդէն ժամակարգութեան մէջ ։ Սուրբ Աստուած—որ խաչեցարվասն մեր՝ փառաքանութիւնը ** եւ նզովում են այն քոլորին, «որք յանդզնեցան ասել երկու քնութիւնն եւ երկու դէմս ի վերայ միոյ Քրիստոսի Աստուածոյ», մինչ Աղուանից աշխարհը եկել էին ումանք «ի Վանաց Գետրոսի—զշար որումն Նեստորի անարգելաքար սերմանել ի հոգիս անմեղաց»։ Կատակառուացին իւր այս թղթից վրայ աւելացրած ծանօթութեան մէջ մոլորեցուցիշներին պարզաբեր քաղկեդոնական է անուանուած եւ մեր Արքայութեան Ներկայ թուականի մայիս հ.-ում՝ ու առանձին տետրակով հրատարակած եւ ։ Եւ Յովհաննէս Լուկիուսուս Բուղակը (Երկրորդ կարեւոր յիշատակարանը ինչորի պարզաբանութեան համար) ցոյց է տալիս նորա տուած տեղեկութեան հասանական լինելու։ Այդ թղթի յառաջարանի մէջ մնոն Նկատել էինք, որ նորա գրութեան ժամանակը դժուար է որոշել, որպէսզի կարելի լինէր մի զաղափար կազմել, թէ ինչ ընթացք ստացաւ մեր կարծիքով Դուկինի ժողովից յետոյ, Հայոց եւ

Աղուանից մէջ ծագած ժամանակաւոր գժողոթինը։ Եթոյ մնոր կարողացանք տեղեկանալ որ Յովհաննէս եպիսկոպոսը նրուասղէմի պատրիարք է ընտրում 574 թ.-ին եւ ապօնէ գոնէ մինչեւ 593 թ.-ը։ Ըստունելով ուրեմն, թէ ծիշը է Կաղանկատուացու Արասի կաթոլիկոսութեան համար ցոյց տուած ժամանակը՝ թէ նա կաթոլիկոս ընտրում է յուրով Կուչիրվանի Բ. տարին եւ մատել 44 տարի շարունակ։ Կումս մինչեւ մօտ 577 թ.-ը, կունենանք մի քանական ճշգրիտ թուական՝ 574—577-ը, նորան գրած թղթի ժամանակն որոշելու համար։

Ներկայ համարին իրենց յամելուած լոյս ահսող Ա. Բանեսի Բուղակը երրորդ կարեւոր յիշատակարանն է, որ լոյս է սփռում այդ ինորի վելայ, չնաշուելով Ովուանէսի պատմութեան մէջ պահուած կումսակի տեղեկութիւնները։ Երրանամ կաթոլիկոսի ծեռուպութեան ժամանակ Սմբատ մարզպանին տուած ծեռնարկի մէջ տարեթիւ Նշանակած է յուրով Ապրումզի տանեւեօթներորդ տարին, որին 607 թ.-ը, * իսկ այս թղթով գրուել է արդէն Աքքանամի կաթոլիկոսութեան օրով, որին անդիւ ուշ եւ ցոյց է տալիս որ քաղվեդնական վէճելն Աղուանից մէջ է միայն Յովհաննէս կաթոլիկոսի թղթից անմիջապէս յետոյ շվերացան, ինչպէս կաղանկատուացն է պատմում, ոչ միայն շարունակուամ էին Խօթանանական, ուժուուտական թուականներին, ինչնէս Երուսաղէմի եպիսկոպոսի թղթից Երևանուն է, աւ տեմեցին մինչեւ է, դարձ սկզբները, եւ այն զժութիւնը, որի պատճառով Աղուանից կաթոլիկոսը Ներկայ շեղաւ Սմբատ մարզպանի գումարած ժողովին եւ որ միայն Աքքանամի օրով վերջացաւ գերազանցութեան ինորութեան շէն յառաջ եկել հասանականար, ինչպէս Ուկուանէս կաթում է, այլ այսպիսի վէճերից։

Ներկայ թղթով մնոր արտապում ենք նոյն հ. 58 եւ 100 ձեռագիրներից, որոնցից

* Պատմութիւն Աղուանից աշխարհի. Մոսկվա. 1860. Աթ. 93—97:

** Որ եկեղեցւոյ մէջ մտցրել է առաջին անգամ մօտ 570 թ.-ին Անտիոքի Պատրոս Փուլո պատրիարքը, իսկ մեր եկեղեցն ընդունել է հասանականարար Յովհաննէսի նախորդ ներսէն Բ. Աշտարակեցու օրով, Գուինի ժողովում։

Հ. Գաթրմնան այսպէս ընդունելով հակառակ Զամշանի գիտ չէ արեւ հարկու, ինչպէս ցոյց է տուած նորա Հանգանակ հաւատոյ՝ աշխատութեան եր. 2 ծանօթութեան մէջ, այլ հնտեւել է պարզապէս ուխտանէսին։

արտապարուած էր նաև Յովհանն Խմաստասիբ-
րի Ծաղը, * քայց այս անզամն նորա նումթինը
գոնէ այն շափով ապահով է, որ Վաստիննան
միաբանութեան ոնեցած ծեռազրի մէջ եւս
զուտում է այդ թուղթը, թէպէտ դժբաղ-
դաբար մաշոց շունինը մեր օրինակը նորա
հայ քաղցատենրուու։ Իր արդարեւ + ԵՌԱԼԻՆԱՆ
ոնի շնորհի այս գրուածքը ըստ մեծի մասին
անհաւկանալի լինելով համբակ արտագրու-
թիր համար այնպիսի անհնարին կետադրու-
թին է ներկայացնում մեր ծեռազիրների
մէջ եւ տեղ տեղ այնպէս աղաւաղուած է, որ
դժբարութեամբ միայն կարելի եղաւ մեզ
ներկայ շափով ընթեռնի կացուցանել այն.
մնկ անտեղի համարեցինը գոյսել նոյն իսկ
այն տեղերը, որոնց ուղիղ ընթերցուածքը զիւ-
րաւ գուշակել կարելի էր, այլ միայն կետա-
զրութինը մեր կողմից ամելացրինը եւ ուղ-
ղեցինը այն շափով, որչափ երկու ծեռազիր
ների համեմատութինը թոյլ էր տալիս՝ հե-
տեւելով Տ. 58. օրինակին եւ նշանակելով
միա օր. ի կարեւոր տարբերութինները։

Սուածին հետաքրքիր կէտն այս թղթում
այն է, որ նա ոչ թէ Աղուանից կաթուղիկո,
վին ու քոլոր եպիսկոպոսներին է ուղղուած,
այլ Ա. Բարսուր Ս. Հ. Տ. Ե. Հ. Պ. Հ. Ե. Ե. Ե. Ե. Ե.
Ա. Մալխոչներին։ Ով էր այդ եպիսկոպոսը եւ
որչափ հեղինակութինը ունէր իր եւղեցւոյ
մէջ մնիք շենք կարող ասել. բայց այսքանը
գոնէ պարզուում է դրահով, որ այստեղ
վէճի առարկայ եղող աղանդաւոր կարծիքների
պաշտպան քոլոր եւեղեցին չեմ, այլ մի որո-
շալ խումը միայն։ Ե. յ. ու հետեւ ասելի հե-
տաքրքիր է այն հանգամանըը, որ սորա ըստ
երեսութին քրիստոսի ս. Մարդեղութեան գե-
ռաքերեալ վէճերով չէին գրալուում միայն,
այլ իմովերներ էին արծարծում նաև ս.
Եղորդութեան մասին, մինչդեռ այդ իմովե-
րներ կ. գուստ տիեզերական ժողովից յետոյ
(381 թ. ին) մի անզամ ընդ միշտ փակուած
նամարուում արեւելիան եկեղեցւոյ համար։
Կարելի էր կարծել օր. թէ (Զօր) Վաստուց
յառաջգէտ եւ նախակարծ. լինելու մասին
վէճը հեռաւոր կերպով գոնէ նմանակութին ու-

նէր այն ընդարձակ վէճերի հետ, որոնք ս.
Օգոստինոսի ժամանակից սկսած զրեթէ
մինչեւ մեր օրերը պարբերաբար տեղի են
ունեցել Արեւմտեան եկեղեցւոյ սահմաննե-
րուու. ի նկատի ունենալով մանաւանդ այն
հանգամանըը, որ ս. Օգոստինոսի հակառա-
կորդ Թելագեանները յետոյ նեպողականնե-
րի հետ միացան եւ նոցա հետ միասին քա-
նակրուցան Եփեսոսի ս. ժողովում՝ կարելի
էր նոյն իսկ այն համարձակ ենթադրութիւնն
ամել, թէ այդ երկու աղանդների կապացու-
թեան մի աղօստ հետքն է նշմարուում այս-
տեղ. այդ ուշպէտմ պատմական մի շատ
կարեւոր երեսութիւ յիշառակութին կունենա-
յինը մեք աշքի առաջ. Սակայն գուցէ այդ
երեսութիւ է միայն՝ թղթի հեղինակը ս. Եղորդ-
ութեան վերաբերեալ դարձուստները քերում
է գուցէ միայն Տարտասանական նպատակով՝
ցոյց տալու համար թէ դիմացիններն իրենց
տգիտութեամբ իմշպիսի աննիմն եւ հակասա-
կան գաղափարներ եկ յառաջ քերել իրենց
թղթի մէջ։ Յամենայն ուչպա վէճը կրկին ս.
Մարդեղութեան խնդիր վերայ է ծանրանում
եւ իմշպէս երեսում է Աղուանից մոլորութինն
արդէն յիրափ աւելի նեպողական ընաւո-
րութինը ունի, թէ եւ քաղկեդոնական վէճե-
րից էր անշուշտ յառաջ եկկել։

Դիմումից յետոյ, ուր յիշուում է յատ-
կապէս Հայերի Աղուանից կողմից մի դաս-
անական թուղթ ստանալը Սիմես Գրիգոր իշ-
խանի ծեղորդ եւ տեղեկութիւններ առնելը
նոցա մէջ տեղի ունեցող շարժման մասին՝
Վրթանէս քերթող, որ միայն վերնազրի
համաձայն մեր թղթի հեղինակն է, յիշեցը-
նում է այն քրիստոսամանդ սէրը, որ քոլոր
քրիստոնեաններին ի մի մարմին պէտք է միացը-
նէ, եւ իրեւ այդ միութեան անհրաժեշտ պայ-
ման զնում է ուղղափառ հաւատը. Որովհետեւ
Աղուանը՝ շնայելով իրենց պնդումներին, շե-
ղումը են ուղղափառ հաւատից, ուստի Հայոց եւ-
կեղեցւոյ ներկայացուցիչները սրբազն պարտը
պէտք է համարեն՝ թոյլ շտալ, որ այդ զայ-
թակութիւնը հաստատուի եւ քրիստոսի հօտի
մէջ պատկառում ընկնի, եւ ահա ս. Գրիգո-
րիուս ուղիղ հաւատոյ անսպառ աղքիթից,
նոքա վկայութիւններ են քերում մի ար մի

ցոյց տալու եւ հերքելու մոլորեալների իրենց թղթի մէջ քերած սխալ կարծիքները: Այսպէս: Հայր Աստուծոյ համար կարելի չէ «յառաջագէտ եւ նախակարծ» միանգամայն ասել: որովհետեւ այդ երկու գաղափարներն իրար հակասում են եւ ամեն կարծիք փոխուել կարող է, միազդեռ Աստուծոյ իր գիտութեան մէջ եւ անփոփոխ է: Շոյնավախ մոլորովթին է Որդոյ Աստուծոյ համար «անվանեկ միածին եւ անմանան», ասել: որովհետեւ եթէ Նա անդանիկն է՝ ուրեմն ուրիշ միածիններ եւ կան, իսկ նույնանուն նսեմնովթին է ցոյց տալիս եւ համապատասխան չէ Որդոյ աստուծային փառաց: «Ճարրական» ասել նորա համար՝ արդէն «անտանելի հայոցութին է, որովհետեւ այդպիսով Նա արարածների կարող էր դաստիքը. իսկ «աստուծամիառն մարմին» առած համարել՝ անհեթեթ միտք է եւ բոլորովին հակառակ փրկարծութեան սխրճութիք: Անինաստ է նոյնպէս եւ աստուծաշունչից դուրս, ասել թէ Հոգին սուրբ մըկրտութեան միջոցին պսակ է քերոմ: Քրիստոսի համար, պսակը անարգութիւնից բարձրացնելու նշան է, իսկ Քրիստոս քարձը է ի սկզբանէ անտի:

Այսունետեւ բոլոր առարկութիւնները դարձած են երկու քնութեանց մոլար վարդապետութեան դէմ, որով բանին Աստուծոյ տարբեր յատկութիւններ են ընծայուսմ՝ եւ մարդոյն տարբեր: Բազմաթիւ վկայութիւններով եւ օրինակներով ցոյց է բոլոր փրկչական տնօրինութիւնները՝ մարդկային բնաւորութիւնուննանթէ աստուծապիտին, նոյն քրիստոսի վերագրել, եւ թէ ինչպէս որ եւ իցէ բաժանումն նոցա մէջ մեծամեծ անտեղովթիւնների է տանում: Երբեւ հետեւութիւն առանձնապէս շեշտած է ապա որ շատ օրինատը է ուրեմն՝ «Սուրբ Աստուծո, որ խաչեցար» ասել: Արդարեւ այս բոլոր բացարքութիւններց յետոյ մոտմ է կրկին մի անբացարեց եւ խորհրդատը ինչ, բայց այդ զարմանաթ չպէտք է թուի եւ անտեղի քննութիւններ անելու յորդրուէ: — Աղուանք երկու քնութեանց ուսման համար վկայութիւն էին քերել ս. Քրիստո.


14, 4.

«Համար շեշտելով յարում է այն գաղափարը, թէ Քրիստոսի, իբրեւ անարատ գոհի, արինը մեր վերկովթեան ծառայել կարող էր միայն այն դէպրում, եթիւ ինչուածն ու գերեզմանում թաղուածը նոյնն է, որ յարութիւն առաւ, զժովքը յաղթայարեց եւ չօր աջ կողմը նստաւ: — Այս կարեւոր գաղափարի բացարքութեանն է նովրուած թղթի վերջն մասը, հերքելով այն անիմս կարծիքը, թէ Քրիստոսի մարմինը միայն թաղած պէտք է համարել, որովհետեւ հոգին, հոգեղենը թաղել կարելի չէ: Վրթանէս Ծարտար կերպով ցոյց է տալիս կրկին միանգամ, թէ ինչպէս հակառակորդների սխալ վարդապետութիւնը դէպի Զորբորդովթիւն է տանում եւ ստիպում է Քրիստոսի Աստուծո վիւելն իսկ ուրանալ եւ լոկ մարդ խոստվանել, հրէաների դասակից եւ ս. Եկեղեցայ մարմից անջատ ներկայանալով պատպէս: Նա կնքում է իր խօսքը մի լուրջ եւ ազդու յորդոր ուղղելով Ամարասի եպիսկոպոսին՝ չքակտուել հաստով երկու ազգերի այն ընդհանուր եկեղեցուց, որի հիմքը ս. Գրիգոր է զրել, եւ ստիպել բոլորովին կոտելու բաժանելու այդ միութիւնից ու դասածանների կարզը դասելուն հրապուրութիւն է այն խարոաիկ երևույթից, թէ ուրի բազմութիւնն է, այստեղ է նաեւ ծշմարատութիւնը, մինչեւն քրիստոս «փոքրիկ հօտին» է խոստանում եկի արքայութիւնը:

Այսպիսով Վ. Յ. Դ. թագավոր ներկայանում է իրակե ամենահին կարեւոր յիշատակարաններից մէկը, պարզելու համար մեր եկեղեցու ի սկզբանէ անտի քոնած որովթիւնը քառկելիոնական հարցի նկատմամբ, ինչպէս եւ մի հարեւան եկեղեցոյ մէջ տեղի ունեցած շփոթութիւնները. չնպած իր մովք եւ խըթին ոմին՝ նա հմտ գործ է եւ մանրամասնութեանց մէջ շատ հետաքրքիր առանձնայտակութիւններ է ներկայացնուած: Սակայն նեղնակի մատենագրական արժանեաց մասին երեւի մենք առիթ կունենանք մի ուրիշ անգամ խօսելու, եթիւ հանդէս քերենք նորա

որից անտիպ աշխատութիւններ: Սոցա համեմատութեամբ կարելի կիսի նաև ստուգել թէ արդեօք նորա այս թղթի իսկական հեղինակ լինելը որեւէ կասկածի ենթարկում ամէ:

Կ. Վ.



ՀԱՄԻՍԼԱՄԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՆՈՐԱ ԱՆՄԱՏՁԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ
ՕՐԴԻՄԱՆՅ ՀԱՄԱՐ: *

Համիսլամականութիւն ասելով հասկանում ենք մահմեդական ընդարձակ աշխարհին յատուկ միութեան գիտակցութիւնը: Ինչքան աւելի ուշագրութեան արժանի է այն հանգամանքը, որ այդ ամուր կապը կրօնական հիմքի վերայ է հաստատուած, նոյնքան աւելի աչքի է ընկում և այն, որ նորա դէմ համարդիստոնէականութիւն դնել կարելի չէ, կամ սահմանափակ մաքով միայն կարելի է: Յիրաւի մահմեդականութիւնը չնայած իւր աշխարհն տարածականութեան (արևելեան Ասիայից մինչև Սենեգալ), շատ աւելի միապազաղ տպառութիւն է գործում, քան բազմագատիկ կերպով բաժան բաժան եղած քրիստոնէութիւնը: Բօլորովին անիրաւացի է, Շիա հերձուածը Սուննայի վարդապետութեան հետ համեմատելով իրրե ազատամիա ուղղութիւն ներկայացնել իսկապէս Շիան քաղաքական մի կուսակցութիւն երսկղում, որ ձգտում էր խալիքայութիւնը Մահմեդի մահից յետոյ նորա հօրեղբօրորդի և փեսայ Ալիին անցնել տալ: Իսկ այսօր շիաների և սուննիների մէջ եղած թշնամութեան հիմք կազմում է աւելի այն ազդային

հակառակութիւնը, որ բաժանում է պարսիկներին թուրքերից, կամ արաբներից, արևելքում այդպիսի մի հակառակութիւն չեցառութեամբ կրօնական բնաւորութիւն է ստանում: Սուննի մահմեդականութեան մէջ այդպէս կոչուած չորս աղանդները տարրերում են իրարից միայն մի քանի աննշան հայեացներով մասամբ օրինական, մասամբ ծիսական: Սակայն բօլոր մահմեդականները, թէ շիա և թէ սուննի, այն հապատ ինքնազգացումն ունին, որ իրենք մի Ալլահի առաջնախապատիւ, կրօնական համայնք են կազմում, և չեն ձանաչում ոչ մի բաժանումն աղետութեան և եկեղեցոյց մէջ: Իրօք կրօնը միակ կապը չէ, որ նոցա կապում է, այլ կրօնի շնորհիւ նաև ընդհանուր քաղաքակըրթութիւնը, ընդհանուր օրէնքը և ընդհանուր կրթութիւնը: Այդ կրթութիւնը, որ այնքան տարրեր է մերից, իւր հիմք ունի արարերէն զորանը (որ օտար լեզուներով ըլպէտք է թարգմանուի) և Մահմեդի բերանացի խօսքերը աւանդութիւնը ինչ գիտութեանն է վերաբերում՝ այս օրուայ մահմեդական աշխարհն իւր սնունդն առնում է իւր նշանաւոր անցեալից: թէ և նոր մեկնաբանական կամ առհասարակ կրօնական գրքեր նոյնպէս գրուում են, բայց նոր բեղուն գաղափարներ հաղիւ թէ նշմարուին նոցա մէջ: Ըստ մինչև Ժ գարերում մահմեդականութիւնը ստիպուած է եղել կռիւ վարել այդպէս կոչուած մոլթազիլների անուղղագրաւան աղատամիա հայեացների դէմ, որոնք մասամբ կազ ունեին յունական փիլիսոփայութիւնից ձեռք բերած ծանօթութեան հետ բայց կարողացել է յաղթել նոցա, բաւականաշափ օգուտ քաղելով նաև այդ կռուից իւր սեփական զարգացման համար: Այդ օրուանից նորա ներքին կազմակերպութիւնը պատրաստ էր, և նա մեզ ներկայանում է իրրե մի միտպազաղ, ամիսոփի որոշ անցեալի վերայ հաստատուած քաղաքակըրթութեան աշխարհ: Ով այսօր ձգտում է այդ աշխարհում կրթութեած լինել պէտք է պարապէ զորանի հետ կազ ունեցող վիտութիւններով, որոնց թուում է նաև արարերէն քերականութիւնը՝ թուըք լինի նաև ձապոնացի թէ մարոկացի՝

* Այս կրկնակի վերնագիրների ներքոյ երկու յօդուած է հրատարակել Christliche Welt-ի 39 և 41-րդ համարներում մեր անցեալ անգամ յիշած Պոռֆ. Սոցին (Երարատ եր. 404), որ և իրեւ հեղինակաւոր գրութիւններ թարգմանօրէն յառաջ նոք բերում այստեղ, ինչ ինչ յապաւումներով: